

ՔԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱՇԱՐԻՔ

Ա.

Ձիւն, ցուրս ու սարսուռ,
Սարհուն վրայ եւ ձորերուն խոր.
Լուսինն սառույցի փըրուած կըսոր,
Ասդիւր՝ լացող աչք,
Դաշտանը կարին վերեւ կաթնաթոր:

Ձիւն ու սրտմութիւն մարդոց սիրտերուն՝
Ի զո՛ւր կ'որոնեմ Եւրջըս ու հեռուն,
Ժըպիսն արեւուն,
Բարեկամութեան ըսփոփանքն անոյց:

Անցած օրերու յիշատակն աղիւտ,
Լեռներէն անդին լուռ կը հեծկլճայ,
Հոգիս բընաւեր մոլորած թռչուն,
Օրերուն դէմ չար:

Բայց խիղճս է պայծառ,
Հեռուն կը շողայ արեւն ոսկեսաւ,
Խոստումով վաղուան,
Հին գինին ինչպէս բաժակներու խոր:

Բ.

Օրերէն այս ցուրս կ'ուզէի միայն,
Նայուածք մը ծըպիս, կըսոր մը բերկրանք,
Գգուանքը ձեռքին բարեկամութեան,
Ինչ որ փափաքն է մարդերուն բոլոր,
Վիշտերուն դէմ մերկ եւ անարձագանգ:

Օրերու ճամբուն՝ օրերէն սրտում,
Յանուն սէրերուս, երազներուս վառ,
Յոյսերուս գալար, կը բալձայի դեռ
Քիչ մ'արդարութիւն:

Տեսնէի մարդիկ անվիւս եւ ուրախ,
Աւսարհն ընդարձակ, երկինքը պայծառ,
Սիրտերուն վրայ ծիածան մը նոր
Կապող իր կամար:

Ինչպէս կ'ելուզուի խաղողէն զինի,
Ածուխէն կըրակ,
Այնպէս ալ ջուրը վերածուէր լոյսի,
Երազներն մարդոց՝ իրականութեան:

Գ.

Կ'անձրեւէ նորէն, կ'անձրեւէ բարակ,
Կը դողան ծառեր հովերուն դիմաց,
Կ'արթննան ուժգին ցաւերս հին ու նոր,
Արցունքներով յորդ:

Անձրեւէն շիջող կայծերու նըման,
Հրնուանքներս բոլոր կը մարին կարգաւ,
Ծառերն օդին մէջ կ'օրօրուին սրտում,
Շուներու աչիւն՝ վախ մը թաց ու մութ,
Երազներս ռսկի լուռ կը մոխրանան:

Երկինքներու խոր կ'ընկրկի ճակաւ,
Շարանն ամպերու ծուէն առ ծուէն,
Եղկանուէ լոյսով կը լեցուի չորսկողմ,
Մութերէն յետոյ, ցաւերէն ազաւ,
Ի՞նչ լաւ է աւխարհ:

Վ.ՏԱՐԱՆԴԻ

1957 Փետր. 17, Ամման

